կենք մեր ճանապարհն, ամեն ուրեք մեզ պիտի պատահին աւեր գիւղեր և կամուրջներ, աւեր եկեղեցիներ ու վանքեր, աւեր գիւղաքաղաքներ ու բերդեր, արդ, տես և ուշի ուշով դիտէ այն հրապուրիչ հանգստարաններուն, որք դեռ կանգուն և անեղծ մնացած են, կարծես խոյացած են Գարա-Քիլիսէի և Ալաշկերտի վերայ, ուր կատարուած անզթութիւնները կը թուեն, կը ձայնեն իւրեանց սերնդոց,—արիք, շտապեցէք, մեր ծոցն հանգիստ գտէք. առ այս կարծես իւրեանց շուրջն կենդանութիւն սփռած են, ուր գոյնզգոյն զմայլեցուցիչ ծաղիկներ ածին և կանաչագոյն մարգագետիններ կազմեն և հրապուրեն, որպէս զի հեռանան այն դաժանելի կեանքէն, գան հանգիստ գտնեն.

Շտապաւ պիտի անցնեմք, յարգելի ընթերցող, աւազակներու երկիրն չթոյլ տար մի վայր կանգ առնելու, հանգստանալու. ձիով ենք, ասպանդակով շարունակ հարուած տալու հետ ենք ձիերուն, որք քարտանց և փրփուրներու մէջ են. այս միջոցին յետևդ և առաջդ հրացանաձգութեան արձագանքներ կորոտան, պատահեցաւ քեզ հանգստարան մի, նա հրապուրեց զքեզ, դու թոյլ պիտի տաս ամեն երկիւղ, սողաս ձիէն վայր, արագ քայլերով աչք դարձնես ամեն անկիւն, արտասուելով պիտի բարձրանաս, քշես և այսպէս շարունակ։

Ահա քեզ հանգստարաններ, որք դեռ—խոժոռ աչք կը հայեն երկրի աւերիչ խորդ զաւակներու վերայ, դեռ պատկառանք ազդած են որոց, որք կարծես առ ամօթոյ հեռացած են մի քարի ետևն, մի ձորակի ափն, մի ժայռի կողի վերայ և կամ դտած են մութ որջեր, խորխոր քարայրներ, ուր ապաստանած են որ